

ՀՏԴ 32.019.5(479.243)

Քաղաքագիտություն

ՆՈՐ ՍԵՐՆԻ ԶՃԱՆԱԶՎԱԾ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՊԵՏԱԿԱՆԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿԱՆ ՈՒ ԿԻՐԱՌԱԿԱՆ ԲՆՈՒՅԹԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՐՑԱԴՐՈՒՄՆԵՐ Աշուտ ՂՈՒԼՅԱՆ

Բանալի բառեր՝ իրավունք, պետականաշինություն, քաղաքական գործընթաց, հասարակություն, պատերազմ, ճանաչված պետություն, չճանաչված պետություն, ինքնիշխան պետություն, հին սերնդի պետություն, նոր սերնդի պետություն

Ключевые слова – право, государственное строительство, политический процесс, общество, война, признанное государство, непризнанное государство, суверенное государство, государство старого поколения, государство нового поколения

Key words – law, state-building, political process, society, war, recognized state, non-recognized state, sovereignty, new generation state, old generation state

А. Гулян

Теоретическая и прикладная проблематика государственного строительства в непризнанных государствах нового поколения

В статье представлены основные тенденции политологического осмысления процесса государственного строительства в непризнанных государствах нового поколения, в том числе и в Нагорно-Карабахской Республике. Отдельно рассматриваются объективные и субъективные факторы, оказывающие внешнее и внутреннее влияние на процесс становления новых непризнанных независимых государств.

A. Ghoulyan

Theoretical and applied issues of state-building in unrecognized states of new generation.

The article presents the main tendencies of interpretation of the process of state-building in unrecognized states of new generation including Nagorno Karabakh. The influence of external and internal, objective and subjective factors on the formation of newly independent unrecognized states are treated separately.

Հոդվածում ներկայացվում են նոր սերնդի չճանաչված պետություններում, այդ թվում եւ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում պետական շինարարության ընթացքի քաղաքագիտական իմաստավորման տեսակետից կարեւոր առանձնահատկությունները: Առանձին քննվում են նորանկախ չճանաչված պետությունների կայացման վրա ներազդող արտաքին եւ ներքին, օբյեկտիվ եւ սուբյեկտիվ գործոնները:

Խորհրդային Միության տրոհման արդյունքում, ինչպես հայտնի է, բազմաճյուղի է դարձել ոչ միայն ճանաչված պետությունների ընտանիքը: Կտրուկ ավելացել է նաև չճանաչված կամ մասնակիորեն ճանաչված պետությունների թիվը, պետություններ, որոնք «ծնվել են» էթնոքաղաքական լարվածությունների գոտիներում և, որպես կանոն, վերածվել են լոկալ և տարածաշրջանային լարվածության, ընդհատվող ու վերսկսվող հակամարտությունների դաշտերի: Գլոբալ քաղաքական տարածության ոչ մի ուժային կենտրոն անտարբեր չէ նրանց շուրջը ծավալվող իրադարձությունների նկատմամբ, քանի որ չճանաչված պետությունները դարձել են յուրօրինակ այն նժարները, որոնք ցույց են տալիս ուժային գլխավոր կենտրոնների միջև հաստատված հավասարակշռության պահպանումը կամ խախտումը:

Այն դերակատարությունը, որ չճանաչված պետությունները կատարում են տարածաշրջանային և գլոբալ գործընթացներում, մեծապես կախված է նրանց իրական կայացման գործընթացից, այն բանից, թե նրանք արդյոք ունեն այն կշիռը, որ էական գործոն լինեն ուժային կենտրոնների հարաբերություններում: Իսկ դա առաջին հերթին կախված է նրանից, թե նման պետություններում ինչպես են ընթանում պետական համակարգի ձևավորումը, իշխանության հաստատությունների կայացումը:

Պետական շինարարության հիմնախնդիրը ըստ էության նոր չէ: Պատմության, իրավունքի և փիլիսոփայության մասնագետները պետության ու պետականաշինության հարցերին անդադադարձի են մշտապես՝ և անտիկ շրջանում, և միջնադարում, և նոր ու նորագույն ժամանակներում: Տարբեր դարաշրջաններում հիմնահարցը քննվել է իր ժամանակի առանձնահատուկ սոցիալ-տնտեսական ու քաղաքական երևույթների համատեքստում: Բնականաբար, տարբեր դարաշրջաններում առաջին պլանում հայտնվել են տնտեսական իմաստավորման տեսակետից հրատապ տարբեր հարցեր՝ պայմանավորված պետության՝ որպես քաղաքական հաստատության, զարգացմամբ, նրա առջև ծառացած մարտահրավերների փոփոխությամբ: Չի կարելի շրջանցել կամ հաշվի չառնել պատմական ժամա-

նակի այն առանձնահատկությունները, որոնք վերջին հարյուրամյակում պայմանավորել ու որակապես փոխել են պետությունների գործունեության միջավայրը, ներագրել են նրանց գործառնությունների վրա, ձևավորել սոցիալ-տնտեսական, մշակութային ու քաղաքական այն շրջանակները, որոնցում ընթանում են և «հին պետությունների կյանքը» և պետականագոյացման նոր գործընթացները: Պատմական այդ առանձնահատկությունները արդեն իսկ առանձնացված են փիլիսոփայական ու քաղաքագիտական գրականության մեջ և լայնորեն հայտնի են: Պատմական այն ժամանակը, որում ապրում ու գործում է մեր սերունդը, բազում բնութագրեր է ստացել: Դրանցից հարկ է առանձնացնել պատմական ներկայի այն առանձնահատկությունները, որոնք կարևոր են ԼՂՀ-ում պետական շինարարության ընթացքի քաղաքագիտական իմաստավորման տեսակետից:

Առաջինը պատմության ընթացքի անալիսադեպ արագացումն է, որի առանձին մի դրսևորումը քաղաքական գործընթացների տեմպերի արագացումն է: Սա հարուցում է նոր խնդիրներ ոչ միայն քաղաքական իրավիճակների գնահատման ու վճիռների կայացման, այլև, որ նույնպես շատ կարևոր է, քաղաքական զարգացումների միտումների ու օրինաչափությունների հայտնաբերման ու իրադարձությունների կանխատեսման ոլորտում: Պատմությունը չունի իր ընթացքի այն համաչափությունը, որ հատուկ է եղել նախորդ դարաշրջաններին:

Երկրորդ առանձնահատկությունը, որով բնութագրվում է մեր ժամանակների պատմությունը, համաշխարհայնացման գործընթացն է, որն իր մեջ ներառել է բոլոր պետություններին ու ժողովուրդներին և որը ներագրում է թե՛ քաղաքական գործընթացների ընդհանուր օրինաչափությունների, թե՛ պետությունների ու ժողովուրդների ամենօրյա կյանքի վրա: Աշխարհը դարձել է միմյանց վրա արագ ներագրող փոխկապակցված դեպքերի ու իրադարձությունների բեմահարթակ: Հասարակական կյանքի ոչ մի կրկնություն, առավել ևս պետականագոյացման գործընթացները համաշխարհայնացման համատեքստից դուրս այլևս չեն կարող իրենց էությանը համարժեք գնահատականներ ստանալ: Համաշխարհայնացումը փաստորեն հանգեցրել է նրան, որ էապես փոխվել է այսպես կոչված լոկալ հակամարտությունների դերը: Ցանկացած տեղային կոնֆլիկտ կարող է արագ վերաճել տարածաշրջանային կոնֆլիկտի՝ աշխարհագրական ավելի լայն սահմաններ ներառելու իրական վտանգով: Բնական է, որ համաշխարհայնացումը փոխում է այն միջավայրը, որում գործում են պետությունները և միջազգային հարաբերությունների ոչ ավանդական սուբյեկտները, առաջին հերթին՝ նորանկախ չճանաչված պետությունները:

Պատմական նոր ժամանակի երրորդ բնորոշ գիծը ածանցված է մարդկության համար տեղեկատվության և տեղեկատվական տեխնոլոգիաների դերի փոփոխությամբ: Դրանց ազդեցությունը այնքան է զգալի, որ դարձել է ժամանակակից հասարակության հիմնարար բնութագրիչներից մեկը: Արդեն ոչ մի կասկած կամ տարակուսանք չի հարուցում «տեղեկատվական հասարակություն» հասկացությունը: Հասարակության այդ «նոր տեսակը» որպես անհերքելի իրողություն է դիտվում: Տեղեկատվական հասարակության թեմային նվիրված քաղաքագիտական գրականությունը արդեն իսկ անընդգրկելի ծավալներ ունի: Բայց մեր կարծիքով մենք գտնվում ենք երևույթի ուսումնասիրության սկզբնական փուլում: Տեսաբաններին դեռ հսկայական աշխատանք է սպասվում անհատի, հասարակական կյանքի ու միջազգային հարաբերությունների վրա նոր գործառնություն ստանձնած տեղեկատվություն ֆնեմենի ազդեցություններն ուսումնասիրելու ուղղությամբ, որից դուրս չեն նաև պետականագոյացման գործընթացները և դրանց արդյունքում կայացած պետությունները: Որոշակի իմաստով պետականագոյացման ու պետականաշինության նորագույն գործընթացները ծավալվում են գլոբալ տեղեկատվական (ու նաև ապատեղեկատվական) հոսքերի դաշտում, և բնական է, որ պատմական ժամանակի այդ առանձնահատկությունը չի կարող անտեսվել:

Քսաներորդ դարի պատմական ընթացք ներքերված մյուս «նորույթը», որի հետ անհնար է հաշվի չնստել, միջազգային քաղաքական գործընթացներում զինատեսակների ու սպառազինությունների դերակատարության փոփոխությունն է: Զինված ամեն մի դիմաբախություն, ինչպես արդեն նշվեց, հղի է ծավալվելու և ավելի մեծ կոնֆլիկտի վերաճելու վտանգով: Սակայն դրանով հարցը չի սպառվում: Մարդկությանն արդեն հայտնի է, որ քսաներորդ դարում լայնածավալ պատերազմները կարող են ավարտվել փոխադարձ ոչնչացմամբ, ինչը էապես նոր գործոն է դարձել միջազգային հարաբերություններում: Փոխադարձ ոչնչացման վտանգը կարծես թե ցույց է տալիս այն սահմանը, մինչև որտեղ կարող են գնալ ռազմաքաղաքական կենտրոնները իրենց հարաբերությունների լարվածության ուղղությամբ: Երևույթը փոխել է պատերազմի ռիսկի, լարվածության մեծացման թույլատրելի սահմանի իմաստները:

Ժամանակակից, այդ թվում և չճանաչված պետությունների պետական շինարարության խնդիրները ածանցված են նրանց գործունեության ու գործառնության վրա ներագրող քաղաքական գործոններով, որոնք **ըստ իրենց աղբյուրի** բաժանվում են երկու խմբի՝ **արտաքին և ներքին**: «Հին» պետությունների գործառնության ու նորանկախ պետությունների՝ ասպարեզ իջնելու և կայացման գործընթացի

քաղաքական վերլուծության ամբողջության համար այդ գործոնները պետք է տարբերակվեն ու դասակարգվեն նաև ըստ իրենց բնույթի՝ կախված նրանից, թե դրանք ինչքանով են նպաստավոր կամ աննպաստ տվյալ գործընթացի համար: Գործոնների դասակարգման այս տարբերակում նախորդ բաժանումը չի կորցնում իր նշանակությունը և, կարելի է ասել, համատեղվում է նրկորդի հետ: Արդյունքում ստանում ենք նորանկախ չճանաչված պետությունների կայացման վրա ներազդող, ըստ իրենց աղբյուրի և բնույթի միմյանցից տարբերվող գործոնների հետևյալ դասակարգումը.

- ա/ արտաքին նպաստավոր գործոններ,
- բ/ ներքին նպաստավոր գործոններ,
- գ/ արտաքին աննպաստ գործոններ,
- դ/ ներքին աննպաստ գործոններ:

Ակնհայտ է, որ ինքնիշխան, բայց չճանաչված պետությունների ասպարեզ իջնելու ու կայանալու գործոնների քաղաքական տարբերակման ու բաժանման գլխավոր գիծը այդ գործընթացի համար նպաստավոր ու աննպաստ գործոնների բաժանման գիծն է, քանի որ այդտեղ է վճռվում նրանց միջազգային ճանաչման հարցը: Եվ իրոք, նոր սերնդի չճանաչված ինքնիշխան պետությունները առաջին հերթին առնչվում են նշված երկու կարգի միջազգային քաղաքական գործոնների հետ, գործոններ, որոնք նպաստավոր են եղել այդ պետությունների՝ պատմական ասպարեզ իջնելու և կայացման համար, և գործոններ, որոնք աննպաստ են և խոչընդոտում են նրանց կայացմանն ու միջազգային ճանաչմանը: Քաղաքական արտաքին գործոններն ըստ էության միջազգային միջավայրից, ճանաչված պետությունների համայնքից եկող տարաբնույթ ազդակների բնույթ ունեն, որոնց վերլուծությունն ու գնահատումը պարտադիր է պատմական համայնապատկերի վրա անկախության հայտ ներկայացրած պետության կայացման ու ճանաչման գործընթացն ըստ ամենայնի հասկանալու համար:

Ինչ խոսք, որ արտաքին գործոնների կարևորումը բնավ չի նշանակում ներքին գործոնների ու գործընթացների թերագնահատում: «Ներքին կայացվածությունը» այն փաստական իրողությունն ու իրական հիմքն է, որի հետ ի վերջո հաշվի է նստում միջազգային համայնքը: Այդ տեսակետից, անշուշտ, հատուկ նշանակություն ունի պետության ներքին կայացվածության ներկայացումը միջազգային հանրությանը: Թերևս պակաս կարևոր չէ բացթողումների, սայթաքումների քննական վերլուծությունը, ինչը թույլ է տալիս իրատեսորեն գնահատել ձեռքբերումները, ծագած խոչընդոտները և պետականաշինության գործում անհետաձգելի անելիքներն ու հեռանկարները: Քաղաքական իմաստով այդ վերլուծությունը առաջին հերթին ուղղված պիտի լինի այն ներքին ու արտաքին խնդիրների պարզաբանմանը, որոնք խոչընդոտում են պետության միջազգային ճանաչմանը: Բնական է, որ նման վերլուծությունը ենթադրում է ճանաչված պետությունների պետական շինարարության պատմական փորձի հաշվառում, կայացման դինամիկայի հետ զուգահեռների անցկացում և համեմատում:

Առաջադրված խնդրի տեսակետից նպատակահարմար է նաև գործոնների դասակարգումը ըստ նրանց մեկ այլ որակի կամ բնույթի: Նկատի ունենք այդ գործոնների կեցության ձևը, ըստ որի դիտարկվող գործոնները պայմանականորեն կարելի է բաժանել երկու տարաբնույթ խմբի՝ **օբյեկտիվ և սուբյեկտիվ**:

Օբյեկտիվ բնույթ ունեն այն գործոնները, որոնք ա/ առարկայացված են նախորդ պատմությունից «փոխանցված», ժառանգված այն իրողություններում, որոնք էականորեն ներազդում են ընթացիկ գործընթացների վրա, և որոնց հաշվառումը պարտադիր է պետականաշինության առջև ծառացած խնդիրների տեսակետից արդյունավետ քաղաքականություն տանելու համար, բ/ բխում են այն ընդհանուր օրինաչափություններից, որոնք առկա են տվյալ պատմական ժամանակի պետականաշինության համաշխարհային պրակտիկայում կամ միջազգային հարաբերություններում:

Սուբյեկտիվ բույթ ունեն առավելապես ներքին ծագման այն գործոնները, որոնք պայմանավորված են պետականակերտման ու պետականաշինության գործն իրագործող մարդկային հանրությունների ու անհատների հետ: Սուբյեկտիվ գործոնի «հեղինակները» մի կողմից պետություն կերտող ազգերն ու ժողովուրդներն են, որոնք ելնում են պայքարի՝ պատրաստ հաղթահարելու ամեն դժվարություն իրենց պետության ստեղծման ու ազգային ինքնության պահպանման համար: Մյուս կողմից դրանք այդ պայքարին մասնակցող սոցիալական խմբերն ու քաղաքական առանձին գործիչներն ու անհատներն /առաջնորդներն/ են, որոնք անհրաժեշտ արհեստավարժություն, քաղաքական կամք ու վճռականություն են դրսևորում ժողովրդի պատմության բեկումնային՝ պետության ստեղծման կամ վերածնության փուլում: Մենք հակված ենք այն տեսակետին, որ որևէ պետություն դրսից եկող արտաքին ազդակներն ու ազդեցությունները պետք է դիտի որպես օբյեկտիվ գործոն, անկախ այն բանից, օբյեկտիվ, թե՞ սուբյեկտիվ «ծագում» ունի այն, քանի որ դրանց հետ նա ստիպված է հաշվի նստել որպես իրենից անկախ գոյություն ունեցող իրողության հետ:

Մինչ այժմ մենք անդրադարձել ենք պետականաշինության գործոններին՝ տարբերություն չդնելով ճանաչված ու չճանաչված պետությունների միջև: Սակայն ինքնին պարզ է, որ այդ գործոնները տարբեր կերպ են անդրադառնում երկու կարգի այդ պետությունների պետական շինարարության գործընթացի վրա: Պայմանականորեն մենք **ԽՍՀՄ** տրոհումին հաջորդած շրջանում աշխարհի քաղաքական քարտեզում հայտնված նորանկախ պետությունները կանվանենք **նոր սերնդի պետություններ**՝ ի տարբերություն մինչ այդ գոյություն ունեցած և միմյանց փոխադարձաբար ճանաչված /մեծ մասամբ ՄԱԿ-ին անդամակցած/ պետությունների, որոնք կանվանենք **հին սերնդի պետություններ**:

Նպատակահարմար ենք գտնում ճշգրտել նաև «պետականաշինության գործոններ» և «պետականաշինության նախադրյալներ» իմաստներով հարակից հասկացությունները: Օբյեկտիվ և սուբյեկտիվ բնույթի այն գործոնները, որոնք ժամանակագրորեն նախորդում և կանխատրվում են պետության կառուցման մեկնարկին, եւ որոնք պետության կառուցման գործընթացին ձեռնամուխ եղած ժողովուրդը «գտնում է» պատրաստի վիճակում՝ որպես նախընթաց պատմության ընթացքում ձևավորված իրողություններ, մենք կդիտարկենք որպես պետականության կայացման կամ **պետականաշինության նախադրյալներ**: Պետականաշինության նախադրյալներն, այսպիսով, այդ գործընթացի վրա ներազդող գործոնների ենթադաս կամ ենթախումբ են: Կա նաև մեկ այլ ուշագրավ առանձնահատկություն, որով նախադրյալները առանձնանում են գործոնների դասում: Պետականաշինության նախադրյալներն ունեն մի տեսակ ենթադրական, պոտենցիալ գործոնների բնույթ: Այն, թե կիրականանա արդյոք «աշխատող» գործոն դառնալու նրանց ներուժը, կախված է պետականաշինությանը ձեռնամուխ եղած սուբյեկտների գործունեությունից, նրանց ակտիվությունից:

Հակառակ նրան, որ ճանաչված պետություններից յուրաքանչյուրում պետականաշինության ընթացքն ունեցել է իր առանձնահատկությունները, խնդրո առարկա հարցի տեսակետից նրանք ունեն կարևոր մի ընդհանրություն. այդ գործընթացում նրանք ստիպված չեն հաղթահարել այն իրավական, տնտեսական արգելքները, որոնք կապված են չճանաչվածության քաղաքական իրողության հետ: Նոր սերնդի չճանաչված պետությունները այսպես թե այնպես հաշվի են առնում պետական շինարարության այն հսկայական պատմական փորձը, որ կուտակված է **հին սերնդի պետությունների** կողմից: Սա ինքնին հասկանալի է: Սակայն հանգամանքները պարտադրում են նրանց դուրս գալ այդ փորձի սահմաններից և պետական շինարարության միջազգային պրակտիկան հարստացնել նոր փորձով, նոր խոսքով, քանի որ նրանց՝ որպես ինքնիշխան պետության, կայացումը և պետական շինարարության գործընթացը իրագործվում է պետականագոյացման՝ առաջիններից էականորեն տարբեր միջազգային-քաղաքական պայմաններում: Ասվածից հետևում է, որ արդեն իսկ կայացած և միջազգայնորեն ճանաչված պետությունների պետական շինարարության պատմական փորձը պետք է դիտվի այն օբյեկտիվ գործոնների շարքում, որոնց վրա հենվում են դեռևս չճանաչված պետությունները իրենց կայացման ճանապարհին: Սույն դիտարկումը ցույց է տալիս նաև, որ պատրաստի այդ փորձը նոր պետությունների կայացման գործընթացում կարող է դիտվել իբրև այդ գործընթացի օբյեկտիվ նախադրյալ:

Սրանից տարբեր մեկ այլ նախադրյալ կարող է դիտվել սեփական պետականաշինության այն փորձը, որ մնորոյա պայմաններում պետություն կերտող ժողովուրդներն ունեցել են իրենց պատմության որոշակի շրջանում, փորձ, որը ինչ-ինչ աննպաստ հանգամանքների բերումով ընդհատվել է անցյալում: Այս դեպքում նպատակահարմար է խոսել պետականության վերականգման, պետականաշինության այն ավանդույթների վերածնության մասին, որոնք պահպանվել են պետությունը վերակերտող ժողովրդի պատմական հիշողության, պետականամետ մտածողության և նույնիսկ ազգային սովորույթների ու վարքի մեջ: Այսպես թե այնպես, ժողովրդի պատմական հիշողությունը երբեմնի իր պետականության ու պետական ավանդույթների մասին պետք է դիտվի այն նախադրյալների շարքում, որոնք կարող են «գործի դրվել» որոշակի պայմաններում՝ կախված ազգային պետության վերածնության պայքարի ելած ուժերի ակտիվությունից: Այդ նախադրյալը այլ պարագաներում կարող է նաև չդառնալ «աշխատող» գործոն:

Անկախ պետականության առանձին մի նախադրյալ պիտի դիտվի բարենպաստ արտաքին հանգամանքների համատեքստում միջազգային այն իրադրությունը, որը հնարավորություն է ընձեռել ժողովրդին ձեռնամուխ լինելու սեփական պետության հիմնադրմանը կամ վերականգնմանը: Միջազգային նպաստավոր պայմանները անկասկած պետք է դասվեն պետության հռչակման, հիմնադրման ու նրա հետագա կայացման նախադրյալների շարքին, քանի որ չի բացառվում, որ կարող են լինել այնպիսի պայմաններ, որոնք բացառում են նոր պետության ասպարեզ իջնելը: Նպաստավոր հանգամանքների հիշատակումը, սակայն, չի նշանակում, թե նոր սերնդի պետությունների առջև արգելքներ կամ աննպաստ հանգամանքներ չեն ծագում, չնայած նոր պետության գոյության ու կայացման փաստը, անկախ այն բանից, թե նա միջազգայնորեն ճանաչված է, թե՛ ոչ, արդեն իսկ նշանակում է, որ նպաստավոր նախապայմանները, ընթացիկ միջազգային քաղաքական հանգամանքները և նորահռչակ պետության ինքնահաստատման ու կայացման ջանքերը գերակշռել են աննպաստ գործոնները:

րին ու պայմաններին: Նոր պետության կայացման համար աննպաստ ու բարենպաստ այդ պայմանների ու գործոնների քննական վերլուծությունը ցանկացած նոր պետական գոյացության քաղաքական պատմության էական մաս է կազմում:

Նոր ասպարեզ մտած պետական կազմավորումների պետական շինարարության թեման այսպես թե այնպես անդրադարձ է ենթադրում նաև այդ գործընթացի պարբերացմանը, նրանում այնպիսի փուլերի առանձնացմանը, որոնցում արտացոլվում են պետական շինարարության ընթացքում կատարված կարևոր, որակական անցումները: Մեթոդաբանական այս պահանջը համընդհանուր-պարտադիր բույթ ունի: Դրանով պետք է առաջնորդվի ցանկացած հետազոտող, եթե ցանկանում է համարժեք ձևով արտացոլել խնդրո առակա գործընթացի պատմությունը: Նշված մեթոդաբանական սկզբունքի /պահանջի/ համապարտադիր լինելու հանգամանքը պայմանավորված է նրանով, որ որևէ գործընթացի, այդ թվում և պետական շինարարության ճշմարիտ պատկերը չի կարելի տալ գործընթացի իրական ընթացքին չհամապատասխանող պարբերացման հիմքի վրա: Հարկ է նկատել, որ պետական շինարարության պատմության պարբերացումը ունի կոնկրետ բնույթ և բխում է իրադարձությունների իրական ընթացքից, որն առանձնակի է դրսևորվում ամեն մի նորանկախ պետության դեպքում՝ անկախ նրա ճանաչված կամ չճանաչված լինելուց:

Տեղեկություններ հեղինակի մասին

Աշոտ Ղուլյան – ԼՂՀ ազգային ժողովի նախագահ

E-mail: ashot@artsakh.am

Հոդվածը տպագրության է նրաշխարհելի խմբագրական կոլեկիայի անդամ, ք.գ.դ. Ա.Ենգոյանը: